



Ոչ հիմնական ներդրումային
ծառայությունների մատուցման
կանոններ

CA SP RL 1115 01

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Դիվիսա Էյ Էմ» ՓԲԸ
Գործադիր տնօրենի կողմից
Հրաման թիվ Վ06-15
“16” նոյեմբերի 2015 թ.

Գործադիր տնօրեն _____
Ա.Նահապետյան

1. Օգտագործվող հիմնական հասկացությունները
 - 1.1. **Օրենք՝** «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
 - 1.2. **Կենտրոնական բանկ՝** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
 - 1.3. **Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ Կենտրոնական բանկի պահանջներ՝** (այսուհետև տեքստում ԿԲ պահանջներ)՝ ներդրումային ծառայությունների մատուցման կանոնները և պահանջները, ներդրումային ծառայությունների առանձին տեսակների մատուցման սահմանափակումները և դրանց մատուցման հատուկ կարգը, ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից հաճախորդներին տրամադրման ենթակա տեղեկությունների, հաշվետվությունների և նման այլ փաստաթղթերի կազմի, ձևի, բովանդակության և տրամադրման կարգի նկատմամբ մանրամասն պահանջները, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներից բացառությունները, ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրերին ներկայացվող պարտադիր պահանջները, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ և 66-րդ հոդվածներով նախատեսված պահանջների կատարման մանրամասն չափանիշները.
 - 1.4. **Կանոնակարգ՝ Կենտրոնական բանկի Կանոնակարգ 4/07-ը՝** «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց նկատմամբ պահանջները»
 - 1.5. **Ոչ հիմնական ծառայություններ՝** (այսուհետև տեքստում **ծառայություններ**)՝ համաձայն Օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված ծառայություններ:
 - 1.6. **Խորհրդատու՝**(այսուհետև տեքստում՝ խորհրդատու) մասնագետ, ով իրականացնում է Օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված ծառայությունները:



**Ոչ հիմնական ներդրումային
ծառայությունների մատուցման
կանոններ**

CA SP RL 1115 01

- 1.7. **Հաճախորդ՝** ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի հետ Ընկերությունը կնքել է կամ պատրաստվում է կնքել ոչ հիմնական ծառայությունների հետ կապված խորհրդատվության պայմանագիր:
2. Սույն կանոններում օգտագործվող այլ հասկացություններն ունեն Օրենքում կիրառվող նշանակությունը եթե այլ բան չի բխում կոնկրետ հասկացության կիրառման ընդհանուր համատեքստից: Սույն կանոններում կիրառվող այլ եզրերը, որոնց սահմանումները ամրագրված չեն Օրենքում և այլ նորմատիվ իրավական ակտերում, մեկնաբանվում են հիմնվելով դրանց կիրառման գործարար շրջանառության սովորույթների և միջազգային փորձի վրա:

Կանոնակարգման առարկան

3. Սույն կանոնները կարգավորվում են «Դիվիսա Էյ Էմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հաճախորդներին՝ ոչ հիմնական ծառայությունների հետ կապված խորհրդատվական ծառայությունների մատուցման կարգն ու նպայմանները:

Կանոնակարգման նպատակը

4. Սույն կանոնները ընդունվել են Օրենքին, կարգավորող իրավական այլ ակտերն և կանոններին համապատասխան և ի կատարումն դրանց պահանջների:

Ընկերության խորհրդատուների պրոֆեսիոնալ էթիկայի սկզբունքները

5. Ընկերության խորհրդատուների գործունեությունը և գործողությունները պետք է համապատասխանեն սույն կանոններում շարադրված սկզբունքներին, ինչպես նաև ՀՀ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:
6. Խորհրդատուները պետք է միշտ պահպանեն պրոֆեսիոնալ էթիկայի կանոնները և հաճախորդների հետ իրենց հարաբերությունների ընթացքում չշահարկեն և չվնասեն նրանց, Ընկերության, Ընկերության այլ հաճախորդների, ինչպես նաև ներդրումային հատվածի մյուս պրոֆեսիոնալ մասնակիցների հեղինակությանը:
7. Ընկերության խորհրդատուները պետք է միշտ աջակցեն հանրության կողմից խորհրդատուների նկատմամբ վստահության աստիճանի բարձրացմանը:
8. Խորհրդատուների գործողությունները պետք է հիմնված լինեն հետևյալ հիմնարար սկզբունքների վրա՝
- ազնվություն
 - արդարություն
 - անկախություն
 - օբյեկտիվություն և անաչառություն
 - պատասխանատվություն



Ոչ հիմնական ներդրումային
ծառայությունների մատուցման
կանոններ

CA SP RL 1115 01

- գաղտնապահություն
 - բարեխղճություն
 - օրինապահություն
 - հաճախորդի շահերի գերակայություն
 - աշխատակիցների նկատմամբ հարգանք
 - շարունակական մասնագիտական զարգացում
9. Ընկերության խորհրդատուները պարտավոր են իրենց պրոֆեսիոնալ գործունեության ընթացքում հետևել ներքոնշյալ բարոյական վարքագծին՝
- 9.1. չիրականացնել այնպիսի գործողություններ, որոնց կասկածի տակ կարող են դնել խորհրդատուի օբյեկտիվությունը և անաչառությունը,
- 9.2. պահպանել հաճախորդի կողմից ստացված տեղեկության գաղտնիությունը
- 9.3. ցուցաբերել ջանասիրություն, անաչառություն և մանրակրկիտություն հետազոտությունների անցկացման խորհրդատվության տրամադրման ընթացքում,
- 9.4. խորհուրդների տրամադրման համար ունենալ և ապահովել տրամաբանական հենք հիմնավորված համապատասխան գիտական հետազոտություններով և ուսումնասիրություններով,
- 9.5. ապահովել համապատասխան գրառումների և փաստաթղթավորման համակարգի գործունեությունը, որպեսզի անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի հիմնավորել տրամադրված տեղեկատվության համապատասխանությունը,
- 9.6. նախաձեռնել տրամաբանորեն հիմնավորված ջանքեր, որպեսզի հնարավորինս նվազեցվի տարածվող տեղեկատվության մեջ էական խեղաթյուրումների հավանականությունը,
- 9.7. տեղեկատվության տարածման ընթացքում ցուցաբերել ուշիմություն և խոհեմություն տվյալ տեղեկատվության հետ առնչվող գործոնների ներկայացման կամ չներկայացման գործում,
- 9.8. անընդհատ բարձրացնել մասնագիտական որակավորման մակարդակը համապատասխանեցնելով շուկայի պահանջներին:

**Ընկերության խորհրդատուների պրոֆեսիոնալիզմի և մասնագիտական
ունակությունների ապահովումը**

10. Ընկերության խորհրդատուները պետք է ունենան համապատասխան մասնագիտական պատրաստվածություն և փորձ՝ վերլուծական աշխատանքների իրականացման և հիմնավորված առաջարկությունների տրման համար: Դրա պատշաճ իրականացման համար Ընկերությունը ապահովում է, որ՝



**Ոչ հիմնական ներդրումային
ծառայությունների մատուցման
կանոններ**

CA SP RL 1115 01

- 10.1. խորհրդատուն ունենա համապատասխան բարձրագույն կրտույթուն և մասնագիտական պատրաստվածություն, ինչպես նաև առաջարկությունների ներկայացման և հաշվետվությունների մշակման փորձ,
- 10.2. համապատասխան բարձրագույն կրտույթան բացակայության դեպքում խորհրդատուն պարտավոր է ապահովել անհրաժեշտ հմտությունների տիրապետումը՝ վերլուծությունների իրականացման համար,
- 10.3. խորհրդատուին մատչելի լինեն համապատասխան օրենսդրական դաշտի վերջին փոփոխությունները,
- 10.4. խորհրդատուին հնարավորություն տրվի ապահովելու իր շարունակական մասնագիտական զարգացումը տարբեր ուսուցողական միջոցառումների մասնակցության միջոցով:

Հաճախորդի շահերի գերակայության ապահովումը

11. Խորհրդատուի տրամադրված տեղեկատվությունը կամ նրա կողմից տրված առաջարկությունը պետք է բխի հաճախորդի շահերից, ինչպես նաև ծառայի հաճախորդի շահերին:
12. Արգելվում է Ընկերության խորհրդատուների կողմից հաճախորդի փորձին և գիտելիքներին անհարիր, չհիմնավորված և շահադիտական առաջարկությունների տրամադրումը:
13. Խորհրդատուն պատասխանատվություն է կրում հաճախորդների հետ հարաբերությունների ընթացքում ձեռք բերված տեղեկատվության գաղտնիության ապահովման համար, եթե հաճախորդը մասնավորեցված կերպով նշել է տեղեկատվության կամ դրա որևէ մասի գաղտնի լինելու փաստի վերաբերյալ:
14. Խորհրդատուի կողմից ներկայացվող տեղեկատվության օբյեկտիվության, անաչառության, անկողմնակալության ապահովման համար, այն չպետք է կախված լինի հաճախորդի կամ տեղեկատվության սպառողի պահանջներից:
15. Խորհրդատուն պետք է ապահովի, որ առաջարկությունների մասնագիտական կարծիքի կամ գնահատականի փոփոխության դեպքում տվյալ ծառայությունից օգտվող Ընկերության բոլոր հաճախորդները համահավասար կերպով տեղեկացվեն այդ փոփոխության մասին:
16. Արգելվում է խորհրդատուի կողմից իր վերլուծական նյութերի հետ հաճախորդների ընտրանքային ծանոթացումը կամ տեղեկացումը: Միևնույն ծառայությունից օգտվող հաճախորդները համահավասար են տեղեկատվության ստացման գործընթացում:



**Ոչ հիմնական ներդրումային
ծառայությունների մատուցման
կանոններ**


CA SP RL 1115 01

Տեղեկատվության ծախսերի և միջնորդավճարների մասին

17. Մինչև ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելը Ընկերությունը հաճախորդներին տրամադրում է հետևյալ տեղեկատվությունը ծախսերի և միջնորդավճարների մասին.
- 17.1. ծառայություններից օգտվելու համար հաճախորդի կողմից վճարման ենթակա համախառն գումարը ներառյալ բոլոր միջնորդավճարները, ծախսերը և այլ վճարները,
 - 17.2. բոլոր հարկային վճարները, որոնք պահվում են Ընկերության կողմից, որպես հարկային գործակալ,
 - 17.3. եթե ծառայության արժեքի որևէ մաս վճարվելու է արտարժույթով կամ ներկայացված է արտարժույթով, ապա նշվում է արտարժույթը, փոխարժեքը << դրամով և դրա հետ կապված ծախսերը,
 - 17.4. վճարումներ կատարելու եղանակները:
18. Այն դեպքերում երբ ծառայությունների մատուցման շրջանակում հնարավոր չէ հստակ և ճշգրիտ հաշվարկել ծառայության վերջնական գումարը, այդ դեպքում հաճախորդին ներկայացվում է վերջինիս հաշվարկման կարգը:

Ծառայությունների մատուցման պայմանագիրը

19. Մինչև ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելը Ընկերությունը հաճախորդին հնարավորություն է ընձեռում ծանոթանալու ծառայությունների մատուցումը կարգավորող իրավական ակտերին:
20. Ընկերության Ծառայությունների մատուցման պայմանագիրն առնվազն ներառում է՝
- 20.1. ծառայությունների մատուցման առարկան և նպատակը,
 - 20.2. կողմերի իրավունքներն և պարտականությունները,
 - 20.3. ծառայությունների դիմաց վարձատրության չափի հաշվարկման և վճարման կարգը,
 - 20.4. հաշվետվությունների բովանդակային ընդհանուր նկարագիրը,
 - 20.5. հաճախորդին հաշվետվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը, ժամկետները և ձևը,
 - 20.6. հաճախորդի հետ կապի իրականացման կարգը, ինչպես նաև այն միջոցները, որոնք տվյալ հաճախորդի համար հանդիսանում են տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ,
 - 20.7. պայմանագրի պահանջների չափապանման համար կողմերի պատասխանատվությունը,
 - 20.8. կողմերի միջև առաջացող վեճերի լուծման կարգը,
 - 20.9. շահերի բախման կառավարման դրույթներ,

	<p style="text-align: center;">Ոչ հիմնական ներդրումային ծառայությունների մատուցման կանոններ</p>	<p style="text-align: center;">CA SP RL 1115 01</p>
---	--	--

20.10. Օրենքով և Կանոնակարգով նախատեսված պարտադիր այլ տեղեկություններ:

Հաճախորդին ներկայացվող հաշվետվությունները

21. Հաճախորդին տրամադրվող հաշվետվության(ների) նկատմամբ ներկայացվող պահանջները ամրագրվում են ծառայությունների մատուցման պայմանագրում՝ հիմնվելով հաճախորդի հետ բանակցությունների ընթացքում ձեռք բերված փոխհամաձայնության վրա:
22. Եթե ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված է հաշվետվությունների ներկայացման փուլային տարբերակ, ապա Ընկերությունը հաճախորդին է ներկայացնում հաշվետվություն՝ ըստ յուրաքանչյուր փուլի:
23. Հաճախորդին ներկայացվող հաշվետվություններում Խորհրդատուի կողմից կատարված բոլոր ենթադրությունները և առաջարկությունները պետք է լինեն հավուր պատշաճի հիմնավորված, հստակ ներկայացված և ունենան միանշանակ մեկնաբանում:
24. Ընկերության համապատասխան աշխատակիցը պատասխանատու է ընկերության խորհրդատուների հրապարակային ելույթների, հարցազրույցների, հաշվետվությունների և առաջարկությունների արխիվի կառավարման և պահպանման համար: Խորհրդատուները պարտավոր են հույժ զգուշավորություն և աչալրջություն ցուցաբերել հանրային միջոցառումներում ելույթների և մեկնաբանությունների ընթացքում:

Շահերի բախման կառավարում

25. Հաճախորդի նախնական ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված և առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության օգտագործման կարգը սահմանվում է ծառայությունների մատուցման պայմանագրով:
26. Ընկերությունը ապահովում է, որպեսզի հաճախորդից ձեռք բերված ոչ հանրամատչելի տեղեկատվության տարածումը, եթե այդպիսի գործողություն նախատեսված չէ ծառայության մատուցման պայմանագրով, իրականացվի միայն հաճախորդի գրավոր համաձայնությամբ:
27. Ընկերությունը ապահովում է, որ իր աշխատակիցները և այլ շահագրգիռ անձիք չեն օգտվի ձեռք բերված ոչ հանրամատչելի տեղեկատվությունից մինչև այն հանրամատչելի դառնալը: